ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 10338-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագրում ներառված, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ստորաբաժանումների, ենթակա պետական մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների կատարման վերաբերյալ» N 7929-Ա հրամանի հավելվածով հաստատված ծրագրի 2-րդ ուղղության 5-րդ կետի 5.1-րդ ենթակետում ներառված միջոցառման կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 2026 թվականի հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագիրը (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված Հակակոռուպցիոն ծրագրի «Կատարող» սյունակում նշված ստորաբաժանումների պետերին՝

1) համակարգել տվյալ միջոցառման իրականացման աշխատանքները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակատարող ստորաբաժանումների հետ,

2) կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 10-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետին՝ համակարգել Հակակոռուպցիոն ծրագրի կատարման աշխատանքները:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

12/23/2025

X

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
«23» դեկտեմբերի 2025թ. N 10338-Ա հրամանի

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Նպատակը՝ ապահովել Ներքին գործերի նախարարության համակարգում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և արդյունավետ կառավարման ամբողջական ու համակարգված գործընթաց, բարձրացնել կառույցի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ձևավորել բարեվարքության, ազնվության և հանրային վստահության վրա հիմնված միջավայր:

N	Գործողություն	Թիրախն ըստ ժամկետի		Կատարող	Համա-կատարող	Արդյունք	Անհրաժեշտ ռեսուրս և միջոցառում
		1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ				
Ուղղություն 1. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և կառավարման գործիքակազմերի բարելավում:							
1.1	**Կարգապահական խախտումների և կոռուպցիոն ռիսկ պարունակող դեպքերի (վարքագծային կամ կարգապահական դրսևորումների) պարբերական վերլուծության իրականացում.** ՆԳՆ աշխատակիցների և ծառայողների կարգապահական և կոռուպցիոն բնույթի (հանցագործության ենթադրյալ հատկանիշներ չպարունակող) խախտումների վերաբերյալ պարբերական վերլուծության իրականացում՝ օգտագործելով միասնական մեթոդաբանություն և թվային տվյալների վերլուծական գործիքներ: Վերլուծությունը պետք է ներառի խախտումների պատճառահետևանքային գնահատում, ռիսկային միտումների նույնականացում և կանխարգելիչ միջոցառումների մշակում:	1. Մշակել և հաստատել վերլուծության մեթոդաբանությունը:	1. Մշակված մեթոդաբանության հիման վրա՝ իրականացնել տվյալների հավաքագրում և մշակել տարեկան համապարփակ վերլուծական զեկույց:	ՆԱՀՎ	ՌՊՔՄՄՎ ՄՌԿՎ ՏՏԿՎ	1. Մշակվել և հաստատվել է կարգապահական խախտում կամ կոռուպցիոն տարր պարունակող դեպքերի (հանցագործության ենթադրյալ հատկանիշներ չպարունակող) վերլուծության միասնական մեթոդաբանություն: 2. Կատարվել է առնվազն մեկ համապարփակ վերլուծություն՝ ընդգրկելով ստորաբաժանումներում նույնականացված ռիսկային միտումները: 3. Նույնականացվել են կարգապահական խախտման և կոռուպցիոն տարր պարունակող դեպքերի հիմնական պատճառները և ներկայացվել են կանխարգելիչ առաջարկություններ:	1. ՆԱՀՎ-ի և ՏՏԿՎ-ի մասնագետների ներգրավմամբ՝ տվյալների վերլուծական ծրագրային լուծումների մշակում (առկա թվային ծրագրերի ադապտացում): 2. Խորհրդատվական աջակցություն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ), այլ փորձագիտական ներուժ (ՄԱԶԾ, այլ): 3. ՄԱԶԾ ֆինանսական աջակցություն՝

						4. Ներկայացված առաջարկություններից առնվազն 30%-ը ընդունվել և ներառվել է հաջորդ տարվա հակակոռուպցիոն ծրագրում:	ծրագրային լուծումների մշակման գործընթացում: 4. Վերլուծություն իրականացնող անձնակազմի վերապատրաստում՝ տվյալահեն վերլուծության և կանխարգելիչ պլանավորման ոլորտում: 5. Օրենքով չարգելված այլ միջոցների ներգրավում:
1.2	**Գործառույթները կարգավորող իրավական ակտերում կոռուպցիոն ռիսկ պարունակող իրավական բացերի կամ չարդարացված հայեցողական լիազորություն պարունակող նորմերի հայտնաբերում և դրանց վերացմանն ուղղված առաջարկների ներկայացում.** Լիազորությունների իրականացման ընթացքում՝ իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում հայտնաբերել և վերլուծել իրավական նորմեր, որոնք պարունակում են կոռուպցիոն ռիսկեր՝ օրենսդրական բացերի, չարդարացված հայեցողության կամ ոչ հստակ (անորոշ) իրավական ձևակերպումների տեսքով:	1. Նույնականացնել իրավական ակտերում (նախագծերում) կոռուպցիոն ռիսկ պարունակող նորմերը, գնահատել դրանք՝ կոռուպցիոն կամ իրավական ռիսկայնության տեսանկյունից և մշակել դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ:	1. Մշակված առաջարկությունների փաթեթը քննարկել շահագրգիռ ստորաբաժանումների հետ՝ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու կամ իրավական ակտի նախագծում համապատասխան փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համար:	ԻՎ	ՆԱՀՎ ՌՊՔՄՄՎ ՄՌԿՎ ԾՄՈՎՎ ՏՏԿՎ	1. Հայտնաբերվել և փաստաթղթավորվել են կոռուպցիոն ռիսկ պարունակող իրավական բացեր կամ չարդարացված հայեցողական լիազորություններ պարունակող նորմեր: 2. Մշակվել և ներկայացվել է դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների փաթեթ: 3. Առնվազն 30% առաջարկությունների հիման վրա իրականացվել են իրավական ակտերում (հաստատված չափորոշիչներում) փոփոխություններ կամ լրամշակումներ:	1. Խորհրդատվական և մեթոդական աջակցություն՝ Արդարադատության նախարարություն (համաձայնությամբ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ): 2. Իրավական ակտերի ավտոմատ վերլուծության գործիքակազմ (Compliance Checker): 3. Միջազգային խորհրդատվական և տեխնիկական աջակցություն (UNODC, UNDP): 4. Օրենքով չարգելված այլ միջոցների ներգրավում:

1.3	**Ծառայողական քննությունների ընթացքում և դրանց ավարտից հետո բարեվարքության ու կոռուպցիոն ռիսկեր առաջացնող պայմանների նույնականացում և կանխարգելում.** Ծառայողական քննությունների ընթացքում և դրանց ավարտից հետո միասնական վերլուծական գործիքակազմի ներդրում՝ կարգապահական, ինչպես նաև բարեվարքության համակարգի տարրերի և կոռուպցիոն բնույթ ունեցող խախտումները նույնականացնելու նպատակով:	1. Մշակել և ներդնել միասնական վերլուծական թվային և (կամ) ստանդարտ ձևաթղթային գործիքակազմ՝ ծառայողական քննությունների ընթացքում կարգապահական, բարեվարքության համակարգի տարրերի և կոռուպցիոն բնույթ ունեցող խախտումների նույնականացման և վերլուծության նպատակով:	1. Գործիքակազմը կիրառել բոլոր ավարտված ծառայողական քննությունների շրջանակում և մշակել կանխարգելիչ առաջարկություններ ի ամփոփ հաշվետվություն:	ՆԱՀՎ	ՌՊՔՄՄՎ ՄՌԿՎ	1. Ներդրված է ծառայողական քննությունների արդյունքներով կարգապահական, բարեվարքության համակարգի տարրերի և կոռուպցիոն բնույթ ունեցող խախտումների նույնականացման գործիքակազմ: 2. Վերլուծվել են վերջին մեկ տարվա ընթացքում ավարտված ծառայողական քննությունները՝ նույնականացնելով կրկնվող խախտումները, կոռուպցիոն դրսևորումները, կառավարման բացերը, վերահսկողական գործիքակազմերի թերությունները և այլն: 3. Մշակվել և հաստատվել են առնվազն 5 (հինգ) կանխարգելիչ առաջարկություններ: 4. Ստեղծվել է տարեկան միասնական բազա՝ ծառայողական քննությունների ընթացքում արձանագրված խախտումների, դրանց պատճառների և կիրառված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: 5. Նույնականացված բացերի, ազդեցությունների կամ վեր հանված ռիսկերի հիման վրա մշակվել են թիրախային միջամտության առաջարկություններ (վերապատրաստում, վերահսկողության ուժեղացում, ռոտացիա և այլն):	1. Բարեվարքության համակարգում խախտումների պատճառ հանդիսացող գործոնների գնահատման ստանդարտ ձևաթուղթ և (կամ) թվային տվյալների վերլուծության ձևաչափ (Excel կամ BI Dashboard): 2. UNDP/UNODC խորհրդատվական աջակցություն գործիքակազմի մշակման և փորձարկման փուլում: 3. Ծառայողական քննություն և ամփոփ հաշվետվության մշակում իրականացնող անձնակազմի վերապատրաստման կազմակերպում՝ գործիքակազմի կիրառման թեմայով: 4. Օրենքով չարգելված միջոցների ներգրավում:
Ուղղություն 2. Բարեվարքության սկզբունքների վրա հիմնված՝ մարդկային ռեսուրսների զարգացում և մասնագիտական կարողությունների կատարելագործում:							
2. 1	**Ծառայողների նշանակման և առաջխաղացման գործընթացներում բարեվարքության ուսումնասիրության համակարգի ներդրում.** ՆԳՆ համակարգում ներդնել	1. Մշակել բարեվարքության և վստահելիության ստուգման մեթոդաբանություն և	1. Փորձարկել և կիրառել համակարգը՝ ընդգրկելով առնվազն 30%	ՄՌԿՎ	ՆԱՀՎ ՔՈԳՎ ԻՎ ՌՊՔՄՄՎ ՏՏԿՎ	1. Ներդրված է բարեվարքության ուսումնասիրության միասնական համակարգ: 2. վերջին 6 ամսվա բոլոր նոր նշանակվող կամ	1. Մեթոդաբանական ուղեցույցի մշակում՝ հիմնված ազգային (ԿԿՀ կիրառած մեթոդներ) կամ

	ծառայողների նշանակման, առաջխաղացման և պաշտոնավարման ընթացքում բարեվարքության ուսումնասիրության միասնական գործիքակազմ: Ուսումնասիրությունը պետք է ներառի՝ 1. թեկնածուի բարեվարքության և էթիկայի չափանիշներին համապատասխանության գնահատում, 2. հնարավոր շահերի բախման, ազդեցության ցանցերի կամ քրեական ենթամշակույթ կրող անձանց հետ կապերի նույնականացում, 3. տվյալների համապարփակ վերլուծություն՝ հիմնված անձնական և գործառնական վստահելիության ցուցանիշների վրա:	ձևաթղթեր:	նշանակման և առաջխաղացման գործընթացները:			առաջխաղացման ենթակա թեկնածուների վերաբերյալ իրականացվել է բարեվարքության և արտաքին կապերի ստուգում: 3. Նույնականացված են և կանխվել են այն թեկնածուների մուտքը համակարգ, որոնք կապ ունեն քրեական ենթամշակույթի կամ ազդեցության դեպքերի կամ շահերի բախման ռիսկերի հետ:	միջազգային փորձի վրա: 2. Թվային ստուգման ձևաչափի և տվյալների հավաքագրման միավորված հարթակի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ՄԱՀԾ կամ այլ խորհրդատվական աջակցության միջոցով համակարգի ձևավորման և փորձարկման փուլերում: 3. ՄՌԿՎ և ՆԱՀՎ աշխատակիցների վերապատրաստում՝ բարեվարքության ուսումնասիրության ընթացակարգերի թեմայով: 4. Օրենքով չարգելված միջոցների ներգրավում:
Ուղղություն 3. Օպերատիվ վերահսկողության, ռիսկերի մոնիթորինգի և հակակոռուպցիոն արձագանքման մեխանիզմների կատարելագործում:							
3.1	**ՆԳՆ համակարգում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման և վերահսկման նպատակով պլանային և թեմատիկ ստուգումների կատարելագործում.** ՆԳՆ համակարգում ձևավորել ռիսկահեն ստուգումների համապարփակ համակարգ, որտեղ ստուգումները դիտարկվում են ոչ թե բացառապես վերահսկողական, այլ նաև կանխարգելիչ և բարեվարքության խթանող գործիք: Համակարգը պետք է ներառի՝ 1. պարբերական և թեմատիկ (թիրախային) ստուգումների անցկացում՝ հիմնվելով վերլուծություններով	1. Պլանային ու թեմատիկ ստուգումների ստուգաթերթերում (պլան-առաջադրանքներում) ներառել կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման և գնահատման բաղադրիչ: 2. Իրականացնել պլանային (ըստ հաստատված կիսամյակային	1. Իրականացնել պլանային (ըստ հաստատված կիսամյակային պլանների) և առնվազն 1 արտապլանային (թեմատիկ) ստուգումներ՝ միտված ռիսկային ոլորտների վերլուծությանը և կանխարգելիչ միջոցառումների առաջարկմանը:	ՆԱՀՎ	ՌՊՔՄՄՎ ՄՀՎ	1. Ստուգաթերթերում (պլան-առաջադրանքներում) ներառվել են կոռուպցիոն և բարեվարքության ռիսկերի նույնականացման միջոցառումներ: 2. Տարվա ընթացքում իրականացվել է առնվազն 6 ստուգում՝ դրանցից 30%-ը՝ թեմատիկ (թիրախային) բնույթի: 3. Անցկացված ստուգումներով հայտնաբերված ռիսկերի և խախտումների վերլուծության արդյունքում մշակվել են կանխարգելիչ և կառավարչական	1. Ռիսկահեն ստուգումների ստուգաթերթերի և ցուցանիշների համակարգի կատարելագործում՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա: 2. ՄԱՀԾ կամ այլ խորհրդատվական աջակցություն ստուգաթերթերի մշակման և փորձարկման փուլում: 3. ՆԱՀՎ անձնակազմի

	նույնականացված ռիսկերի վրա, 2. ստուգաթերթերում (պլան-առաջադրանքներում) կոռուպցիոն ռիսկերի նույնականացման միջոցառումների պարտադիր ներառում, 3. հայտնաբերված ռիսկերի հիման վրա կանխարգելիչ գործողությունների սահմանում և դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն:	պլանների) և առնվազն 1 արտապլանային (թեմատիկ) ստուգումներ՝ միտված ռիսկային ոլորտների վերլուծությանը և կանխարգելիչ միջոցառումների առաջարկմանը:				բարելավման առաջարկներ: 4. Ստեղծվել է ռիսկերի և կանխարգելիչ գործողությունների տվյալների բազա, որը թույլ է տալիս հետևել միջոցառումների կատարմանը և արդյունքներին:	վերապատրաստում՝ կանխարգելիչ ստուգումների և ռիսկերի կառավարման թեմաներով:
3.2	**ՆԳՆ համակարգի ծառայողների և աշխատակիցների շրջանում խաղամոլության (այդ թվում՝ առցանց հարթակների օգտագործման) և ֆինանսական կախվածության դրսևորումների հայտնաբերում.** 1. Դեպքերի հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում, 2. հայտնաբերված ռիսկերի հիման վրա կանխարգելիչ գործողությունների սահմանում և դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն:	1. Իրականացնել իրավական և տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրություն՝ խաղամոլության և ֆինանսական կախվածության դրսևորումների ռիսկերի հայտնաբերման և գնահատման մոնիթորինգի գործընթաց կազմակերպելու համար:	1. Իրականացնել խաղամոլության և ֆինանսական կախվածության դրսևորումների հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: 2. Հայտնաբերված ռիսկերի և խախտումների վերլուծության արդյունքում մշակել կանխարգելիչ առաջարկություններ և միջոցառումներ:	ՆԱՀՎ	ՌՊՔՄՄՎ ՖԲՎ ԻՎ ՄՌԿՎ ՏՏԿՎ	1. Խաղամոլության և ֆինանսական կախվածության ռիսկերի մոնիթորինգը ներառվել է ներքին անվտանգության տարեկան ծրագրում: 2. Հայտնաբերվել են խաղամոլության և ֆինանսական կախվածության դրսևորումներ և ձեռնարկվել են կանխարգելիչ միջոցառումներ:	1. ՄԱԶԾ կամ այլ խորհրդատվական աջակցություն վերլուծության, գնահատման և կանխարգելիչ միջոցառումների մշակման գործընթացի իրականացման փուլում: 2. Իրավաբանական խորհրդատվություն՝ ֆինանսական տվյալների վերահսկողության իրավաչափության ապահովման ուղղությամբ:
Ուղղություն 4. Հաշվետվողականության, թափանցիկության և հանրային հաղորդակցության կատարելագործում:							
4.1	**ՆԳՆ համակարգում քաղաքացիական վերահսկողության և հանրային հաշվետվողականության ինստիտուցիոնալ համագործակցության զարգացում.** ՆԳՆ և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող հասարակական կազմակերպությունների միջև ձևավորել համագործակցության և հաղորդակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ՝ ուղղված բարեվարքության, թափանցիկության և հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը: Համակարգը պետք է ներառի՝ 1. պարբերական բաց հանդիպումներ և քննարկումներ քաղաքացիական	1. Հաստատել քաղաքացիական հասարակության հետ համագործակցության և հաղորդման կանոնակարգ:	1. Կազմակերպել առնվազն 2 բաց հանդիպում և մեկ հրապարակային հաշվետվություն՝ ներառելով կարգապահական և հակակոռուպցիոն տվյալներ:	ՀՀԻՎ	ՌՊՔՄՄՎ ՆԱՀՎ ԻՎ ՏՏԿՎ	1. Ստեղծվել է ՆԳՆ-ՀԿ համագործակցության և հաղորդակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ: 2. Տարվա ընթացքում կազմակերպվել են առնվազն 2 բաց հանրային քննարկում և հրապարակվել են ՆԳՆ-ի հակակոռուպցիոն և կարգապահական տվյալները: 3. Կազմվել է հանրային հաշվետվություն՝ ներառելով կարգապահական իրավակիրառ պրակտիկայի և հակակոռուպցիոն արձագանքման վերլուծություն:	1. Հանրային հաղորդակցության և թափանցիկության ռազմավարության մշակման աջակցություն՝ մշակված միջազգային լավագույն չափանիշների հիման վրա: 2. ՄԱԶԾ կամ այլ տեխնիկական աջակցություն՝ հանրային հարթակների ձևավորման և հանդիպումների կազմակերպման

	հասարակության հետ՝ բարեվարքության, կարգապահական և հակակոռուպցիոն թեմաներով, 2. կարգապահական իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև կոռուպցիոն դեպքերի բացահայտման և կանխարգելման վերաբերյալ թափանցիկ տեղեկատվության հրապարակում, 3. հանրային հաղորդակցման և իրազեկման միջոցառումների իրականացում՝ վստահության և հանրային վերահսկողության բարձրացման նպատակով:					4. Ստեղծվել է ՆԳՆ գերատեսչական կայքէջում առանձին՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի» բաժին:	համար: 3. ՆԱՀՎ և ՀՀԻՎ անձնակազմի վերապատրաստում՝ հանրային հաշվետվողականության, հաղորդակցության և բաց տվյալների թեմաներով: 4. Թվային ենթակառուցվածքի մշակման աջակցություն՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի» բաժնի ստեղծում, տեղեկատվության հրապարակման և արձագանքման նպատակով: 5. Օրենքով չարգելված այլ միջոցների ներգրավում:
4.2	**ՆԳՆ տարեկան հակակոռուպցիոն աշխատանքային ծրագրերի հրապարակայնության և հանրային մասնակցության ապահովում.** Ապահովել ՆԳՆ հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագրերի հրապարակայնությունը և դրանց շուրջ հանրային քննարկումների կազմակերպումը՝ խթանելով քաղաքացիական մասնակցությունը և հաշվետու կառավարման մշակույթը: Գործընթացը պետք է ներառի՝ 1. 2026թ. հակակոռուպցիոն տարեկան ծրագրի հրապարակում և դրա միջոցառումների շուրջ բաց քննարկումների կազմակերպում, 2. 2027թ. ծրագրի կազմման գործընթացում հանրային, մասնագիտական և ՀԿ ներգրավում:	1. Կազմակերպել ՆԳՆ 2026թ. տարեկան հակակոռուպցիոն ծրագրի հրապարակում և քննարկումներ:	1. Մշակել և հրապարակել 2027թ. հակակոռուպցիոն ծրագիրը՝ ներառականության և մասնակցայնության սկզբունքների հիման վրա:	ՀՀԻՎ	ՌՊՔՄՄՎ ՆԱՀՎ ՏՏԿՎ ՔՀԿ-ներ (համաձայնությամբ)	1. Հրապարակվել է ՆԳՆ 2026թ. տարեկան հակակոռուպցիոն ծրագիրը և կազմակերպվել է առնվազն 2 հանրային քննարկում: 2. Հանրային քննարկումների արդյունքները օգտագործվել են 2027թ. ծրագրի նախագծման փուլում: 3. Հրապարակվել և հասանելի է դարձել ՆԳՆ 2027թ. տարեկան հակակոռուպցիոն ծրագիրը՝ ներառելով հանրային արձագանքների ամփոփ արդյունքներ:	1. ՄԱԶԾ կամ այլ տեխնիկական աջակցություն՝ հանրային քննարկումների կազմակերպման և հաղորդակցման ռազմավարության մշակման փուլում: 2. Գրաֆիկական և մեդիա ռեսուրսներ՝ ծրագրերը հասանելի և ընկալելի ձևով ներկայացնելու համար: 3. Օրենքով չարգելված այլ միջոցների ներգրավում: